Դիրքորոշում հարկային օրենսգրքի փոփոխությունների նախագծի որոշ դրույթների վերաբերյալ

30.01.2019

Հարկային օրենսգրքի փոփոխությունների նախագծի 33-րդ հոդվածով ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածում փոփոխություններ նախատեսող դրույթը, համաձայն որի՝ իրավաբանական ծառայություններ մատուցողներն այլևս չեն կարող հարկվել շրջանառության հարկով, խիստ խնդրահարույց է և ոչ նպատակահարմար հետևյալ պատճառաբանությամբ.

1. Իրավաբանական/փաստաբանական գործունեությունն ինքնին գերշահութաբերություն ունեցող գործունեություն չէ, իսկ բարձր շրջանառություն ունեցող իրավաբանական և փաստաբանական ընկերություններն արդեն իսկ գտնվում են շահութահարկ/ԱԱՀ հարկման դաշտում, ուստի մյուս ընկերություններն ու անհատ ձեռնարկատերերին հարկման այս դաշտ բերելը որևէ նշանակալի ֆինանսական մուտքեր պետական բյուջե չի ապահովելու:
2. Հայաստանում դեռևս զարգացած չէ պրոֆեսիոնալ իրավաբանական և փաստաբանական ծառայություններից օգտվելու մշակույթը, ինչի առաջնային պատճառներից է ծառայություններից օգտվելու կարիք ունեցող քաղաքացիների ցածր վճարունակությունը կամ առհասարակ անվճարունակությունը: Ցածր վճարունակություն ունեցող և անվճարունակ քաղաքացիների թիվը ՀՀ-ում չափազանց մեծ է, ինչը փաստվում է նաև Հանրային պաշտպանի գրասենյակի գերծանրաբեռնվածությամբ և թե քրեական, թե քաղաքացիական գործերով օգնություն հայցող քաղաքացիների քանակով:
Հաշվի առնելով այն, որ իրավաբանական/փաստաբանական գործունեությունը գերշահութաբեր գործունեություն չէ՝ քննարկվող փոփոխությունը անխուսափելիորեն և ուղղակիորեն հանգեցնելու է ծառայությունների հիմնական մասի թանկացման ուղիղ այնքանով, որքանով կծանրանա այն մատուցողի հարկային բեռը՝ շուրջ 35 տոկոսով, որպես արդյունք՝ էլ ավելի կնվազի իրավաբանական/փաստաբանական ծառայություններից օգտվելու ֆինանսական հնարավորություն ունեցող անձանց թիվը, ինչն իր հերթին կհանգեցնի ա/ անձանց կողմից իրավաբանական ծառայություններից օգտվելուց հրաժարվելուն և նրանց դատարանի մատչելիության իրավունքի խախտմանը, ինչպես նաև իրավական խնդիրները ոչ իրավական ճանապարհներով լուծելուն, բ/ էլ ավելի կաճի Հանրային պաշտպանի գրասենյակ դիմող անվճարունակ քաղաքացիների թիվը, ինչով պարտադրված պետության վրա կընկնի լրացուցիչ բեռ՝ նախատեսել Հանրային պաշտպանի գրասենյակի ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող խմբերի առավել լայն շրջանակ:
3. Վերջապես, իրավաբանական/փաստաբանական գործունեությունն առաջին

հերթին իրավապաշտպան գործունեություն է, որի հասանելիությունը իրավական պետության կայացման համար հիմնաքարային հարց է: Իրավաբանական/փաստաբանական ծառայությունների թանկացման արդյունքում պրոֆեսիոնալ իրավաբանական ծառայություններից օգտվելու անհնարինության և իրավական խնդիրները ոչ իրավական ճանապարհներով լուծելու արդյունքը իրավական պետություն կառուցելու ճանապարհին մեծ հետքայլ կլինի Հայաստանի Հանրապետության համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք նախագծի 33-րդ հոդվածով ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածում փոփոխություններ նախատեսող դրույթը, համաձայն որի՝ իրավաբանական ծառայություններ մատուցողներն այլևս չեն կարող հարկվել շրջանառության հարկով, նախագծից հանել: